ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՍԿԶԲԻ ԵՎ ԱՎԱՐՏԻ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Հայտնի է, որ նշանագիտությունը որպես գիտակարգ ուրվագծվել է 20-րդ դարի սկզբին՝ լեզվաբան Ֆ. դը Սոսյուրի, մաթեմատիկոս Գ. Ֆրեգեի և փիլիսոփա Չ. Պիրսի կողմից միաժամանակ, սակայն անկախ իրարից: Նշանագիտության կենտրոնական գաղափարը տարբեր բնույթի նշանների, ինչպես նաև լեզվական նշանի ընդհանուր հատկանիշները նկարագրելն էր: Ժամանակի ընթացքում նշանագիտական մոտեցումն ընդլայնվում է՝ տարածվելով նաև արվեստի ոլորտի վրա:

Նշանագիտորեն ուսումնասիրելով արվեստի ստեղծագործությունները՝ Յու. Մ. Լոտմանը և Բ. Ա. Ուսպենսկին արվեստի գործի նշանային համակարգի համար առաջարկել են մի նոր հասկացություն, որը հենց իրենք անվանել են շրջանակ (рамка)[1]:

Փորձենք բացահայտել այդ «շրջանակ» հասկացության իմաստը: Ամենից հեշտ է սա մեկնաբանել գեղանկարի օրինակով. նկարի շրջանակը, փաստորեն, ունի երկու իմաստ. այն տեխնիկական մաս է (ֆիզիկական իմաստով), բայց նաև ունի բուն նշանագիտական գործառույթ՝ նկարի շրջանակը ցույց է տալիս նրա և արտաքին աշխարհի սահմանները: Թատրոնում նման դեր է կատարում վարագույրը, բեմի ամբողջ կառուցվածքը. թեև որևէ ֆիզիկական արգելք չի անջատում հանդիսատեսին և դերասաններին, նրանք սովորաբար միմյանց չեն խառնվում: Բանն այն է, որ արվեստի աշխարհին առհասարակ բնորոշ է որոշակի պայմանականություն[2]: Եվ այդ պայմանական աշխարհը իրականից անջատելու համար արվեստի տարբեր ոլորտներ օգտագործում են տարբեր միջոցներ: Մեզ, մասնավորապես, հետաքրքրում է, թե ինչպես է դրսևորվում նշանագիտորեն մեկնաբանված շրջանակը գրական տեքստում:

Լոտմանի պնդմամբ «ցանկացած տեքստ, ըստ իր բնութագրի, ունի սահմաններ: Սակայն դրանցից բոլորը չէ, որ օժտված են կաղապար ստեղծելու ունակությամբ»[3]:

Հույժ կարևոր են, մասնավորապես, տեքստի սկիզբն ու վերջն ազդարարող լեզվական հատուկ միջոցները. այդպիսին են, օրինակ, անձնական նամակի կոչականը՝ իբրև սկիզբ կամ տարեթիվը, որը բանաստեղծները դնում են բանաստեղծության տակ:

Պատահական չէ, որ փորձելով ստեղծել տեքստի կառույցի նկարագիրը, այդ նպատակով վերհանելով ցուցիչների (մարկյորների) տեքստակազմիչ գործառույթները՝ Յուջին Նայդան և Չարլզ Թեյբըրն առանձին կարևորություն են տվել սկիզբն ու վերջը մատնանշող միջոցներին: Նրանք են նկատել, որ տեքստի սկզբի և ավարտի ցուցիչնե-

---

[1] Տե՛ս, օր., **Б. А. Успенский**, Поэтика композиции. М., 1970, сс. 181-195.

[2] Դրան է նվիրված հետևյալ հոդվածը՝ **Ю. М. Лотман, Б. А. Успенский**. Условность в искусстве. //Философская энциклопедия в 5 томах, том v, М., 1970, сс. 287-288.

[3] **Ю. М. Лотман**. Исторические закономерности и структура текста.// **Ю.М.Лотман,** Внутри мыслящих миров. М., 1999, с.332.

րը ներառում են ստանդարտ բանաձևեր, հեքիաթի դեպքում դրանք են, օրինակ՝ “once upon a time”, “they lived happily ever after”, “жили-были”, “'и стали они жить-поживать, добра наживать”, «Լինում է, չի լինում», «Ժուկով-ժամանակով»[4]:

Նայդայի և Թեյբրրի նկարագրած սկզբի և վերջի ցուցիչները կարելի է նույնացնել Լոտմանի և Ուսպենսկու ներմուծած շրջանակի հետ: Սակայն, մեր կարծիքով, տեքստի սկիզբն ու վերջն ազդարարող ցուցիչները, բացի այդ, նաև այլ գործառույթների կրողներն են: Այսպես, օրինակ, դրանք ծառայում են տեքստի տիպի (ժանրի) բացահայտմանը՝ «դրսից» տեքստն ընկալողի համար. կարդալով «Լինում է, չի լինում» ավանդական սկիզբը՝ ընթերցողը տրամադրվում է՝ համապատասխանաբար սպասելով հեքիաթի և ոչ թե, ասենք, գիտական հոդվածի, այնինչ հասցեատիրոջ անունը, ազգանունը և պաշտոնը վկայում են պաշտոնական փաստաթղթերի ոչ միայն սկզբի, այլև տիպի մասին[5]:

Մյուս կողմից Նայդան և Թեյբրրը գիտակցում են, որ ցուցիչները համընդհանուր չեն տարբեր մշակույթների տեքստերի համար անգամ միևնույն ժանրի շրջանակներում: Այստեղից հասկանալի է դառնում, թե ինչու և ինչպես են նրանք շաղկապել թարգմանությունը և ցուցիչների մասին իրենց տեսությունը:

Ինչպե՞ս պետք է վարվի թարգմանիչը՝ բնագրի տեքստում նման ցուցիչների հանդիպելիս: Արդյո՞ք դրանք բառացի թարգմանության ենթակա են, թե՞ պետք է փոխարինվեն ուրիշ լեզվի համարժեք պատրաստի բանաձևով:

Իբրև ավանդաբար կանոնակարգված տեքստային նշաններ ունեցող կառույցի օրինակ վերցրել ենք հայկական և ռուսական հեքիաթները՝ փորձելով նկարագրել դրանց սկզբի և վերջի ցուցիչները՝ իրենց տարբերակներով՝ զուգահեռաբար շոշափելով թարգմանության հարցեր:

Մեր աշխատանքի համար հիմք ենք ընդունել Ա. Ղանալանյանի մշակած և Երևանի պետհամալսարանի հրատարակած հայկական ժողովրդական հեքիաթների և Ա. Ն. Աֆանասևի մշակած ռուսական ժողովրդական հեքիաթների ժողովածուները: Նշված ժողովածուների հեքիաթները հիմնականում ունեն սկզբի և ավարտի ցուցիչներ: Որպես հեքիաթի սկիզբ՝ ռուսական հեքիաթներում առավել հաճախ գործածվում են՝ “Жили-были”, “В некотором царстве, не в каком государстве” արտահայտությունները, հայերենում՝ «Լինում է, չի լինում», «Ժուկով-ժամանակով» և այլն: Ավարտի համար ռուսական հեքիաթներում առավել տարածված ձևերն են՝ “Вот вам сказка, а мне кринка масла”, “Стали жить да поживать да денежки наживать”, “На той свадьбе и я был, вино пил, по усам текло, во рту не было”, հայերենի համար՝ «Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին», «Երկնքից երեք խնձոր ընկավ», «Բարին մեզ մոտ, չարը՝ թշնամու» և այլ ձևեր:

Նշված ցուցիչները հիմնականում կայուն ձևեր են և անմիջապես հուշում են այն մասին, որ տվյալ տեքստը պատկանում է հեքիաթի ժանրին: Սակայն քարացած լինե-

[4] **Nida,** Taber, 1969, p. 181-182 (քանի որ աշխատությունը անգլերեն է և բերված օրինակները ևս անգլերեն են, մենք լրացնում ենք ռուսերեն և հայերեն նյութով):

[5] Այս մասին տե՛ս **Н. Л. Абрамян**. «Лингвистика текста и теория перевода» ելույթի հրապարակված թեզում //Международная конференция, посвященная памяти академика Левона Мкртчяна, Ереван, 2003.

լով հանդերձ՝ դրանք ունեն կիրառության բազմակի դրսևորումներ և՛ հայերենում, և՛ ռուսերենում: Նյութը հուշում է, որ լինելով հեքիաթի սկզբի ցուցիչներ՝ իմաստաբանորեն վերջիններս լինում են մի քանի տեսակի. ստորև համեմատության ընթացքում փորձել ենք համադրել հայկական և ռուսական համանման և իմաստով մոտ ցուցիչները:

Եթե դիտարկումը սկսենք ամենատարածված՝ «Լինում է, չի լինում» և, համապատասխանաբար, "Жил-был" ցուցչից, ապա կնկատենք, որ և՛ հայերենում, և՛ ռուսերենում սա «ամենապահպանողական», փոփոխություններ գրեթե չկրող ձևն է. այս ցուցչի փոփոխությունները հիմնականում վերաբերում են ժամանակին և թվին՝ ընդգրկելով նաև բարբառային տարբերակներ: Օրինակ՝ «Ըլնում ա չի ըլնում ավալ ժամանակին մի թագավոր» («Անմահական խնձոր»), «Կար, չկար՝ ժամանակով մի թագավոր կար» («Խոզարած»), «Կըլի, չըլի մի տղա» («Սըմավոն թաքավոր ու գյուլ»), ռուսերեն՝ "Жил-был мужик" ("Кот и лиса"), "Жили-были лиса да заяц" ("Лиса, заяц и петух"), "Бывал-живал старик со старухой ("Лиса – лекарка"), "Жили себе дед да баба" ("Баба-яга"): Թեև սրանք համարժեք ցուցիչներ են և թարգմանության ընթացքում փոխարինում են իրար, սակայն հայկական հեքիաթների ցուցիչն ունի այնպիսի իմաստաբանական երանգ, որից զուրկ է ռուսական հեքիաթի համապատասխան ցուցիչը: Հայ հեքիաթասացը, կարծես, պահպանում է հրաշապատման եղանակը՝ չհավակնելով, որ իր պատմածն անպայման իրողություն է: Նույն միտումը ռուսական հեքիաթներում արտահայտում է մեկ այլ՝ "В некотором царстве, в некотором государстве" ցուցիչը:

Մյուս ցուցիչները, ինչպես հայկական հեքիաթների «Ժուկով-ժամանակով» կամ ռուսական հեքիաթների "В некотором царстве, в некотором государстве" ցուցիչները գործածության տարբերակներ են դրսևորում: Մասնավորապես, հայերենում «ժամանակովը» գործածվում է ինչպես «ժուկովի» հետ միասին, այնպես էլ առանձին, իսկ ռուսերենում փոխվում են «թագավորությունները» և դրանց տեղադրությունը՝ մնալով, սակայն, անորոշ, պայմանական: Այսպես, «Ժամանակով մի թաքավոր ա ըլում» («Ղուշ Փարին»), «Ժուկօվ-ժամանակօվ մի քյասիբ մարթ ա ըլում» («Սինամ թաքավորի հէքիաթը»), «Ժուկօվ-ժամանակօվ արէվլուսի կօնէրին մի գէղըմ մի շատ քյասիբ մարթ ա ըլըմ» («Դունյա Գյօզալի հէքիաթը□): Ռուսերեն հեքիաթների դեպքում՝ "В некотором царстве, далеком государстве" ("Ведьма и Солнцева сестра"), "В некотором царстве, не в каком государстве" ("Буренушка"), "В некотором царстве, не в каком государстве" ("Иван Царевич"), "В некотором царстве, за тридевять земель – в тридесятом государстве" ("Жар-птица и Василиса-царевна"), "В стародревние годы в неком царстве, не в нашем государстве" ("Елена Премудрая"):

Գործածության առավել շատ տարբերակներ նկատվում են ավարտի ցուցիչների դեպքում և՛ հայկական, և՛ ռուսական հեքիաթներում: Կրկին դիտարկենք առավել տարածված ցուցիչները՝ «Երկնքից երեք խնձոր ընկավ» և "Вот вам сказка, а мне кринка масла" ցուցիչների տարբերակները: «Երկնքից իրեք խնձոր վեր ընկավ, մինն ասողին, էրկուսն էլ հանկաջ դնողին» («Ղուշ Փարին»), «Ասծէն իրէքյ խնձօր էչավ, էրկուսն ընձի, մէկյը կտամ քէզի» («Վարթ-Մանուշակի հէքիաթը»), «Վէրէվից հիճան իրէկ հադ խնձօր՝ մէգը շաղ խօսօղին, մէգը պաղմօղին, մէգմ էլ լսօղին» («Աքլի աղաջ»), «Երկնքեն իրեք խնձոր վեր ընկավ՝ մինն ասողին, մինը լսողին, մինն էլ արար աշխարհին»

(«Օխիկը»): “Вот вам сказка, а мне кринка масла” (“Лиса, заяц и петух”), “Вот вам сказка, а мне бубликов связка” (“Волшебный конь”), “Тем сказке конец, а мне водочки корец” (“Хитрая наука”): Ուշագրավ է, որ եթե հայերեն տարբերակում խնձորները պահպանվում են, փոխվում են այն մարդիկ, ում դրանք պետք է բաժին ընկնեն, ապա ռուսերենում ամեն ինչ բաժին է ընկնում հեքիաթասացին, փոխվում է ընդամենը մթերքի տեսականին, որը նա ուզում է իր «աշխատանքի» դիմաց:

Ներկայացնենք ավարտի այլ՝ նորից տարածված ձևեր՝ «Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին» և “Стали жить да поживать да денежки наживать”, որոնք նույնպես հանդիպում են տարբերակներով. «Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին» («Անմահական խնձոր»), «Էնի հասավ ուր մուրազին, մենք էլ հասնինք մեր մուրազին» («Աֆանդու հեքիաթը»), «Նրանք հասան հիրանց մուրազին, ինչ մարթ էլ կարոտ ա՝ հասնի իրա մուրազին» («Խոզարած»), «Նրանք հասնըմ էն իրանց մուրազին, թող աշխարքի բոլոր լավ մարթիկ էլ հասնէն իրանց մուրազին» («Սինամ թաքավորի հէքիաթը»): “Стали жить да поживать да денежки наживать” (“Кот, петух и лиса”), “И стали себе жить да поживать, и теперь живут, хлеб жуют” (“Кот и лиса”), “И стали они жить да поживать, ума наживать, а лиха избывать” (“Волк и коза”), “ ... и стал вместе с ними жить-поживать да рыбку из воды таскать” (“Иванушка и ведьма”), “ ... и стали жить-поживать, добра наживать, да медок попивать” (“Марья Маревна”): Եթե համեմատենք այս երկու տարածված ձևերը, ապա կարելի է նկատել, որ հեքիաթի վերջում արդեն երկու դեպքում էլ հերոսներին հնարավորություն է տրվում ապրել այնպես, ինչպես իրենք ցանկանում են, ինչպես իրենք իրենց երջանիկ են զգում՝ մեկ տարբերությամբ. եթե հայերենի դեպքում դա շատ ընդգրկուն «մուրազ» բառն է, որի տակ ամեն մեկը հասկանում է այն, ինչ ցանկանում է և մաղթում է, որ յուրաքանչյուրն էլ գտնի իր «մուրազը», ապա ռուսերենի դեպքում տրվում են ավելի կոնկրետ ցուցումներ՝ մեկի համար դա փող ունենալն է, մյուսի համար՝ հացը, խելքը, ձուկը և այլն: Ի դեպ, նշված երկու հայկական ժողովրդական հեքիաթների ժողովածուներում կա մեկ հեքիաթ, որն ունի ռուսական հեքիաթների այս ցուցչի նման ավարտ՝ «Ջուր էսօր էլ կուտե, կխմե» («Անկուշտ տերտերը»): Սակայն կրկին նշենք, որ հայկական հեքիաթում նման ավարտը եզակի է, այդուհանդերձ, բացառված չէ: Այս խնդիրը բացահայտելու համար անհրաժեշտ է այլ ուսումնասիրություն՝ փոխազդեցությունների առումով:

Տարբերակների առատության և բազմազանության առումով, մեր դիտարկմամբ, ռուսական հեքիաթների ավարտի ցուցիչներից առաջին տեղում է “На той свадьбе и я был” ձևը՝ իր տարբերակներով՝ “…и я там был, мед-пиво пил; по усам текло, в рот не попало” (“Баба-яга”), “На той свадьбе и я был, вино пил, по усам текло, во рту не было” (“Перышко Финиста ясна сокола”), “... я там обедал, мед пил, а уж какая у них капуста – ино теперь в роте пусто” (“Сказка о молодце-удальце, молодильных яблоках и живой воде”), “ ... звали меня к нему мед-пиво пить, да я не пошел: мед, говорят, был горек, а пиво мутно, Отчего бы такая притча ?” (“Шабарша”): Հետաքրիր է, որ տվյալ ցուցչի դեպքում պարտադիր չէ, որ խոսքը վերաբերի ուրախ առիթի, հեքիաթասացը նույն հաջողությամբ «մասնակցում» է նաև տխուր առիթի, ինչպես այս դեպքում՝ “... и я тут был-поминал, кутью большой ложкой хлебал, по бороде текло – в рот не попало”

("Притворная болезнь"):

Այս դեպքում հեքիաթասացը, ցանկանալով ավելի հավաստի դարձնել իր պատումը, իրեն ևս մասնակից է անում պատումի գործողություններին: Դա հնուց հայտնի ազգու ճարտասանական հնարք է: Եթե ձևակերպենք այս ցուցչի իմաստը, ապա այստեղ կարծես հեքիաթի դրական հերոսների համապատկեր է, հիմնականում ուրախ առիթով հավաք, որին մասնակցում են բոլոր դրական հերոսները, որտեղ պարզ է դառնում նրանց, ինչպես նաև բացասական հերոսների հետագա ճակատագիրը: Ընդ որում, ռուս հեքիաթասացը իրեն նույնպես մասնակից է անում հերոսների այդ հավաքին, այնինչ հայ հեքիաթասացը զոհանում է կողքից, դիտողի դերով: Այս առումով Բ. Ա. Ուսպենսկին նշում է, որ հեքիաթի ավարտին առաջին դեմքի՝ հեքիաթասացի հայտնվելը կարելի է համեմատել գեղանկարում նկարչի ինքնանկարի հայտնվելու հետ[6]: Իսկ Դ. Ս. Լիխաչյովը հեքիաթի ավարտի վերաբերյալ նշում է, որ հեքիաթն ավարտվում է իրադարձությունների բացակայության՝ երջանկության, մահվան, հարսանիքի, խնջույքի արձանագրմամբ. «Եզրափակիչ երջանկությունը հեքիաթային ժամանակի ավարտն է»[7]:

Այս ցուցիչին համարժեք հայկական հեքիաթներում կարելի է դիտել «Յոթ օր, յոթ գիշեր հարսանիք արին» ձևը, որտեղ թիվը կարող է փոխվել որևէ այլ խորհրդանշական թվով: Ինչպես հայտնի է, հեքիաթում պատահական թվեր չեն հանդիպում, այնտեղ կան որոշակի մոգական, հատուկ նշանակության թվեր: Սակայն եթե համեմատենք այս ցուցիչները, ապա պետք է նկատենք, որ հայկական հեքիաթներում հեղինակն իրեն մասնակից չի անում գործողություններին, իսկ պատումի գործողությունները ներկայի հետ կապում է մեկ այլ ձևով, ներկաներին է ներքաշում՝ մաղթանքներ հղելով, որպեսզի նրանք նույնպես արժանանան հեքիաթի դրական հերոսների ճակատագրին: Այս դեպքը, երբ հայտնվում է երկրորդ դեմքը՝ լսողը կամ ընթերցողը, Բ. Ա. Ուսպենսկին համեմատում է անտիկ դրամաներում երգչախմբի գործառույթի հետ, այսինքն, նրա կարծիքով, գեղարվեստական նկարագրության ժամանակ ընկալողի դիրքորոշման արձանագրման անհրաժեշտություն կա[8]: «Յոտ օր, յոտ գիշեր քէֆ ուրախուտուն էրին, ախկըտներուն շաղ օսկի, արձատ բաժնէցին, պզդի տղին թակավոր դրին, ուրանք հասան ուրանց մուրազին, բարօվ, խէրով դուք լէ հասնիկ ձըր մուրազին» («Թակավորի իրէկ տղէն»), «Կէրան-խմէցին, քառասուն զօր ու գիշէր հարսանիկ էրին, պսակեցին պզդիկ ախջգան, ուրախացան էդօնկ, էդպէս ուրախուտուն էնի ձէզ, էրէխանէր ջան» («Շայ-թամբալի պաղմուտուն»), «Քառսուն օր զօր ու գիշէր քէֆ էրին, ուրխըցան: Վէրէվից հիճան իրէկ հաղ խնձօր՝ մէզը շաղ խօսօղին, մէզը պաղմօղին, մէզմ էլ լսօղին» («Աքլի աղաջ»): Հաղորդակցման երկու դերերից ռուս հեքիաթասացը արդիականացնում է պատմողին, հայ հեքիաթասացը՝ ներկաներին:

Մինչև այժմ ուշադրության կենտրոնում ենք պահել այն դեպքերը, երբ գործածվել է սկզբի և ավարտի միայն մեկ ցուցիչ, սակայն հայկական և ռուսական հեքիաթներում բազմաթիվ են դեպքերը, երբ միասին գործածվում են մեկից ավելի ցուցիչներ՝ սկզբի և

---

[6] Տե՛ս, օр., **Б. А. Успенский**, Поэтика композиции, М., 1970, сс. 191-193.

[7] **Д. С. Лихачев**, Поэтика древнерусской литературы, стр. 218.

[8] **Б. А. Успенский**, цит. соч., сс. 191-193.

ավարտի համար: Չափանիշ ենք ընդունել այն փաստը, որ այդ ցուցիչները կարող են գործածվել նաև առանձին: Օրինակ, կրկին դիտարկումը սկսենք ամենատարածված «Լինում է, չի լինում» և «Ժուկով-ժամանակով» ցուցիչներից, որոնք հաճախ հանդես են գալիս միասին՝ «Կար, չկար՝ ժամանակով մի թագավոր կար» («Խոզարած»), «Ավալ ժամանակին ըլնում ա չիլնում մի թագավոր» («Ջան Փոլատ»): Ռուսերենում հաճախ միասին են գործածվում “Жил-был” և “В некотором царстве, далеком государстве” ցուցիչները՝ “В некотором царстве, далеком государстве, жил-был царь с царицей ...” (“Ведьма и Солнцева сестра”), “За тридевять земель, в тридесятом государстве жил-был царь с царицею” (“Морской царь и Василиса Премудрая”), “В некотором царстве, не в каком государстве жил-был царь” (“Буренушка”):

Սակայն առավել հաճախ մեկից ավելի ցուցիչների կիրառության դեպքեր նկատում ենք հեքիաթի ավարտին՝ «Ախպերտինքը հասնըմ էն իրանց մուրազին, մէնք էլ հասնէնք մէր մուրազին: Խէրն ըստի, շառը վատ մարթի կտրօվը դվէր նստի: Հէրգնքիցը իրէք լավ խնձօր ընգնի. մինը ասօղին, մինը լսօղին, մինն էլ էս հեքիաթը ձայնագրօղին» («Դունյա Գյօզալի հէքիաթը»), «Իրանք հասան ուրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին: Երկնուց իրեք խնձոր իջավ, մեկը ըսողին, էրկուսն էլ լսողին» («Միսաք»), «Նրանք հասան հիրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին: Երկնքից իրեք խնձոր ընկավ, մինն ասողին, էրկուսը լսողին» («Օհան ոըջպարի տղի հեքիաթը»): Ռուսերենում՝ “... стал жить да поживать, да добра наживать, и я там был, мед-пиво пил; по усам текло, в рот не попало” (“Баба-яга”), “И я там был, мед-вино пил, по усам текло, во рту не было; подали белужины – остался не ужинавши” (“Королевич и его дядька”):

Որպես հեքիաթների ցուցիչների առանձնահատկություն պետք է նկատել, որ դրանք, լինելով արձակ, այնուամենայնիվ, հանգավորված են: Դա վերաբերում է և՛ հայկական, և՛ ռուսական հեքիաթներին, թեև պետք է նշել, որ ռուսական հեքիաթներում հանգավորելու միտումն ավելի վառ է արտահայտված: «Ըլում են,/չեն ըլում /մի մարդ /մի կնիկ» («Թոռչու տղեն»), «Կար, չկար՝ /ժամանակով մի թագավոր կար» («Խոզարած»), «Նրանք հասան/ իրանց մուրազին, /դուք էլ հասնեք /ձեր մուրազին» («Անմահական խնձոր»), «Երկնքից իրեք խնձոր վեր ընկավ՝ /մինն ասողին,/ մինը լսողին, /մինն էլ անկաջ դնողին» («Ջան Փոլատ»), «Խերն էստի, /շառ ու շահմաթը թշնամու գլխին» .(«Փեշակը ոսկի ա»), «Երկնքեն իրեք խնձոր վեր ընկավ՝ /մինն ասողին, /մինը լսողին, /մինն էլ արար աշխարհին» («Օխիկը»), «Ախպերտինքը հասնըմ էն իրանց մուրազին, /մէնք էլ հասնէնք մէր մուրազին:/ Խէրն ըստի, /շառը վատ մարթի կտրօվը/ դվէր նստի:/ Հէրգնքիցը իրէք լավ խնձօր ընգնի./ մինը ասօղին,/ մինը լսօղին, /մինն էլ էս հեքիաթը ձայնագրօղին» («Դունյա Գյօզալի հէքիաթը»): Իսկ մի դեպքում, ընդհանրապես, ավարտի ցուցիչը գրված էր չափածո.

Երգընքից իրեք խնձոր կաթի.
Մինն ասողին, մինը լսողին,
Մինն ալամ աշխարհին» («Թոռչու տղեն»):

Բերենք ռուսական հեքիաթների ցուցիչների օրինակներ՝ “На море /на океане, /на острове /на Буяне /стояла небольшая /ветхая избушка;/ в той избушке жили / старик да старуха” (“Золотая рыбка”), “В старые годы,/ в старопрежние,/ в красну весну, /в теплые

лета /сделалась такая соморота,/ в мире тягота” (“Мизгирь”), “И я там был, /мед-вино пил, /по усам текло, /во рту не было;/ подали белужины /– остался не ужинавши” (“Королевич и его дядька”), “На том пиру и я был, /мед-вино пил,/ по усам текло, /да в рот не попало; /тут меня угощали:/ отняли лоханку от быка /да налили молока: /потом дали калача,/ в ту ж лоханку помоча:/ я не пил,/ не ел,/ вздумал утираться, /со мною стали драться;/ я надел колпак,/ стали в шею толкать” (“Иван Царевич”).

Արդեն նշել ենք, որ հեքիաթների ցուցիչները գործածվում են ոչ թե կայուն ձևերով, այլև տարբերակներով, սակայն անգամ այդ դեպքում դրանք հաճախ պահպանում են իրենց ներքին հանգավորումը, ասացողներն այնպիսի բառեր են գործածում, որպեսզի պահպանեն ցուցչի ներքին հանգավորումը: Ասվածին իբրև ապացույց կարելի է բերել արդեն իսկ նշված բոլոր օրինակները:

Հայկական և ռուսական հեքիաթները ցուցիչների ընդհանրություններից բացի, ունեն նաև իրենց առանձնահատկությունները: Մասնավորապես, ռուսական հեքիաթների առանձնահատկություններից է այն, որ որոշ դեպքերում օգտագործվել են անսովոր ցուցիչներ, որոնք ունեն եզակի կիրառություն: Օրինակ, սկզբի համար օգտագործվել են` “В старые годы, в старопрежние, в красну весну, в теплые лета сделалась такая соморота, в мире тягота” (“Мизгирь”), “В то давнее время, когда мир божий наполнен был лешими, ведьмами да русалками, когда реки текли молочные, берега были кисельные, а по полям летали жареные куропатки, в то время жил-был царь...” (“Три царства – медное, серебряное и золотое”), “Ай потешить вас сказкой? А сказочка чудесная, есть в ней и дива дивные, чуда чудные ...” (“Шабарша”), “Слыхали ли вы о Змее Змеевиче ?” (“Звериное молоко”), “Летала сова – веселая голова: вот она летала, летала и села, да хвостиком повертела, да по сторонам посмотрела, и опять полетела: летала, летала и села, хвостиком повертела да по сторонам посмотрела ... Это присказка, сказка вся впереди”. (“Журавль и цапля”).

Երկու ժողովուրդների հեքիաթները համեմատելիս պետք է նկատել, որ երկուսն էլ առավել հաճախ ցուցիչներ օգտագործել են հեքիաթի ավարտին, քան սկզբում: Բացառությամբ մեկ-երկու դեպքի, սկզբի ցուցիչը մեկ նախադասությունից ավելի չէ, այնինչ ավարտի ցուցիչը շատ ավելի երկար է, հաճախ` մի քանի ցուցիչների կուտակումներով: Համեմատությունը ցույց է տալիս, որ ռուսական հեքիաթներն ավելի շատ են «ցուցիչավորված», քան հայկականները:

Վերը բերված օրինակներից կարելի է նկատել, որ ռուսական հեքիաթներում երբեմն ցուցիչներն ավելի մշակված, ավելի երկար են, քան բուն հեքիաթը: Ակնհայտ է, որ դրա իմաստը շատ ավելի լայն է, քան ավարտի ցուցիչ լինելը. ասացողը նման երկար ու մշակված ցուցիչներով ցանկանում է ցուցադրել իր գիտելիքներն ու ասացողի իր վարպետությունը, ինչպես նաև ավելի հավաստի դարձնել իր պատմածը:

Ի դեպ, առաջին հայացքից կարող է թվալ, թե որոշակի հակասություն կա. հեքիաթի սկզբում առկա է տեղի, ժամանակի անորոշություն, իսկ վերջում պատմողը կարծես թե կոնկրետացնում է գործողությունը` վկայակոչելով իր ներկայությունը գործողությանը: Սակայն առավել ուշադիր դիտարկելիս կնկատենք, որ հեղինակն ամենևին էլ որևէ բան չի կոնրկրետացնում, քանի որ թեև ինքը ներկա է եղել խրախճանքին, սակայն տարբեր պատճառներով սոված է մնացել, այսինքն, իրականում ոչ մի բանի էլ չի

մասնակցել, ամեն ինչ պարզապես հորինում է: Տեղին է հիշել Հովհաննես Թումանյանի «Սուտլիկ որսկանը» հեքիաթը, որը սկզբից մինչև վերջ կառուցված է հենց այս հնարքի վրա և ավարտվում է ռուս ասացողների սիրած բանաձևը հիշեցնող ու պատումի հորինված լինելը մատնանշող ձևակերպմամբ. «Որսից եկած սոված մարդիկ, վրա եկանք, կերանք, կերանք, ոչ աչքներս բան տեսավ, ոչ բերաններս բան մտավ»: Է.Պոմերանցևան ևս ընդգծում է, որ հեքիաթի քիչ թե շատ ընդունված սահմանում ցուցում է դրա հորինված լինելը[9]:

Ինչ վերաբերում է հայ ասացողին, ապա նա հեքիաթի ավարտին ընդամենը «խնձորներ է բաժանում» և մաղթանքներ ու խրատներ անում: Եթե հայկական հեքիաթներում ամենաերկար ցուցիչը կարող է լինել երեք տող, օրինակ՝ «Ախպերտինքը հասնըմ էն իրանց մուրազին, մէնք էլ հասնէնք մէր մուրազին: Խէրն ըստի, շառը վատ մարթի կտրօվը դվէր նստի: Հէրգնքիցը իրէք լավ խնձօր ընգնի. մինը ասօղին, մինը լսօղին, մինն էլ էս հեքիաթը ձայնագրօղին» («Դունյա Գյօզալի հէքիաթը»), ապա ռուսերենում դա կարող է լինել մի քանի պարբերություն՝ “И я там был, мед-вино пил, по усам текло, в рот не попало: ел я капусту, а в брюхе-то пусто. Дали мне колпак, стали со двора толкать: дали мне шлык, а я в подворотню шмыг. Дали мне синь кафтан: летят синицы да кричат:

- Синь кафтан, синь кафтан.

А мне послышалось: “Скинь кафтан”. Скинул и бросил на дороге.

Дали мне красные сапоги: летят вороны да кричат:

- Красные сапоги, красные сапоги.

А мне послышалось: “крадены сапоги”. Снял да и бросил.

Дали мне лошадку восковую, плетку гороховую, уздечку репяную: увидел я – мужик овин сушит, привязал тут лошадку – она растаяла, плетку куры склевали, а уздечку свиньи съели” (“Фома Беренников”).

Կարծում ենք՝ արդեն տեղին է խոսել այն մասին, թե ինչ է ցուցիչը և ինչից ենք հասկանում, որ մեր առջև ցուցիչ է, այլ ոչ թե հեքիաթի բաղադրիչ, ինչպես նաև՝ որոնք են դրանց առանձնահատկությունները: Արդեն նկատեցինք, որ հեքիաթի ցուցիչները որոշակի ընդհանուր բանաձևեր են, որոնք որևէ տեքստի մասին ասում են, որ դա հեքիաթ է: Եթե խոսենք հեքիաթի ցուցչի առանձնահատկությունների մասին, ապա դրանք կայուն ձևեր են, որոնք, սակայն, տալիս են տարբերակների որոշ հնարավորություն: Եվ երկրորդ, այդ ցուցիչները, մեր կարծիքով, ինքնուրույն ձևեր են և որևէ կապ չունեն հեքիաթի սյուժեի հետ: Օրինակ, «Լինում է, չի լինում», «Ժուկով-ժամանակով», «Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին», «Երկնքից երեք խնձոր ընկավ», «Բարին մեզ մոտ, չարը՝ թշնամու» կամ “Жили-были”, “В некотором царстве, не в каком государстве”, “За тридевять земель, в тридесятом государстве”, “Вот вам сказка, а мне кринка масла”, “Стали жить да поживать да денежки наживать”, “На той свадьбе и я был, вино пил, по усам текло, во рту не было” ձևերը բուն պատումի հետ որևէ առնչություն չունեն և որևէ ձևով չեն հուշում, թե հեքիաթի սյուժեն ինչի մասին է:

---

[9] **Э. Поперанцева**, Сказка, Словарь литературоведческих терминов, М., 1974, стр. 356.

Ավելին, որոշ դեպքերում, հիմնականում ռուսական հեքիաթների դեպքում, այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ որոշ ցուցիչներ եղել են ինքնուրույն պատմություններ, բանաստեղծություններ, որոնք ունեցել են նաև առանձին գործածություն և կցվելով հեքիաթին՝ ձեռք են բերել ցուցչի գործառույթ: Մեր այդ ենթադրությունը հաստատվում է А. Н. Афанасьев-ի "Народные русские сказки" ժողովածուում, որտեղ "Докучные сказки" բաժնում տեսնում ենք փոքրիկ «պատմություններ», որոնք որոշ հեքիաթների համար դարձել են ավարտի ցուցիչ: Այսպես, "Жил-был старик, у старика был колодец, а в колодце-то елец: тут и сказке конец" փոքրիկ «պատմությունը» որոշ տարբերակներով տեսնում ենք գործածված որպես հեքիաթի ավարտի ցուցիչ՝ "Был у Иванушки колодец, в колодце рыба елец, а моей сказке конец" ("Иванушка-дурачок"), "На дворе у них была лужа, а в ней щука, а в щуке-то огонец; этой сказочке конец" ("Чудесная дудка"):

Այն ենթադրությանը, թե որոշ ցուցիչներ եղել են առանձին ավարտուն պատումներ, բերում է նաև այն փաստը, որ թեև այդ ցուցիչները երբեմն շատ երկար են, սակայն բացառությամբ որոշ դետալների, գրեթե նույնությամբ կրկնվում են, իսկ նոր տարրեր ավելացնելիս, ինչպես արդեն նշել ենք, պահպանվում է դրանց ներքին հանգավորումը, օրինակ "Я там был, пиво пил, по губам текло, в рот не попало. Дали мне синь кафтан, ворона летит да кричит:

- Синь кафтан, синь кафтан.

Я думаю: ,Скинь кафтанЋ - взял да и скинул. Дали мне колпак, стали в шею толкать. Дали мне красные башмачки, ворона летит да кричит:

- Красные башмачки, красные башмачки.

Я думаю: "Украл башмачки" - взял да и бросил". ("Золотой башмачок"): Նույնի մեկ այլ տարբերակ՝ "И я там был, мед-вино пил, по усам текло, в рот не попало: ел я капусту, а в брюхе-то пусто. Дали мне колпак, стали со двора толкать: дали мне шлык, а я в подворотню шмыг. Дали мне синь кафтан: летят синицы да кричат:

- Синь кафтан, синь кафтан.

А мне послышалось: "Скинь кафтан". Скинул и бросил на дороге.

Дали мне красные сапоги: летят вороны да кричат:

- Красные сапоги, красные сапоги.

А мне послышалось: "крадены сапоги". Снял да и бросил.

Дали мне лошадку восковую, плетку гороховую, уздечку репяную: увидел я – мужик овин сушит, привязал тут лошадку – она растаяла, плетку куры склевали, а уздечку свиньи съели" ("Фома Беренников").

Մեկ այլ օրինակ՝ "На той свадьбе и я был, вино пил, по усам текло, во рту не было. Надели на меня колпак да и ну талкать; надели на меня кузов: -Ты, детинушка, не гузай, убирайся-ко поскорей со двора" ("Перышко Финиста ясна сокола") և նույնի տարբերակները՝ "На том пиру и я был, мед-вино пил, по усам текло, да в рот не попало; тут меня угощали: отняли лоханку от быка да налили молока: потом дали калача, в ту ж лоханку помоча: я не пил, не ел, вздумал утираться, со мною стали драться; я надел колпак, стали в шею толкать" ("Иван Царевич"), ''И я там был, мед-вино пил, по усам текло, во рту не было; подали белужины – остался не ужинавши" ("Королевич и его

дядька"). Մեկ օրինակ ևս՝ "Был у Иванушки колодец, в колодце рыба елец, а моей сказке конец" ("Иванушка-дурачок"), "На дворе у них была лужа, а в ней щука, а в щуке-то огонец; этой сказочке конец" ("Чудесная дудка").

Հեքիաթների ցուցիչները դիտարկելիս նկատում ենք նաև, որ մեկ հեքիաթի մեջ հանդիպում են մի քանի սկզբի և ավարտի ցուցիչներ այն դեպքում, երբ հերոսները միմյանց են պատմում հեքիաթներ՝ նույնպես սկսելով և ավարտելով նույն բանաձևով, որը տվյալ ժողովրդի գիտակցության մեջ դարեր ի վեր ամրապնդվել է որպես հեքիաթի սկիզբ կամ ավարտ: Այս դեպքում դրանք ավելի շուտ ձևոք են բերում ներքին անցումների գործառույթ. օրինակ՝ ¤Արաբն ասում ա. «Կըլնի, չիլնի մի մարդ…»», «Արաբն ասում ա. «Ըլնում ա, չիլնում մի խառադ, մի դերձիկ, մըն էլ մի իմաստուն»», «Արաբն ասում ա, «Ըլնում ա, չիլնում մի թագավոր»» («Ոսկե ձուկը»), «Քաչալը դոները շինեց, բալանիքները դրեց ջեբը, նստեց իրա տեղը, սկսեց ասիլը: Ասեց. «Ժամանակով կար մի թագավոր, ըտրան ուներ իրեք տղա, մի ախչիկ»» («Հարսներն ու տալը»):

Հատկանշական է, որ ի տարբերություն օրեցօր փոփոխվող աշխարհի, շատ պահպանողական է մնում հեքիաթի ժանրը, քանի որ բոլոր ժամանակներում և այսօր էլ, երբ ծնողները երեխայի օրորոցի մոտ հեքիաթ են պատմում, թեկուզ տվյալ պահին հորինված, սկսում և ավարտում են նույն բանաձևով՝ «Լինում է, չի լինում»:

Այդուհանդերձ, անմտություն կլիներ պնդել, որ հեքիաթը հեքիաթ է, որովհետև ունի սկզբի և ավարտի ցուցիչ. սա չի կարելի բացարձակացնել. ինչպես բոլոր օրենքներից և կանոններից, այստեղ նույնպես կան բացառություններ, կան հեքիաթներ, որոնք ընդհանրապես չունեն ցուցիչներ, սակայն չեն դադարում հեքիաթ լինել: Նախ հեքիաթը հեքիաթ է, որովհետև արտահայտում է որոշակի աշխարհընկալում, մասնավորապես հեքիաթային իրականությունը յուրովի է, այդ գաղափարը հակիրճ և դիպուկ կերպով արտահայտում է ռուսերեն հեքիաթի ավարտի ցուցիչը՝ "Сказка ложь, да в ней намек, добрым молодцам урок" (Ա. Ս. Պուշկին):

Սակայն վերադառնալով ցուցիչներին՝ նշենք, որ ժողովրդական հեքիաթների սկզբի և ավարտի ցուցիչները պահպանում են նաև գրողները հեքիաթներ գրելիս: Հ. Թումանյանի հեքիաթներում տեսնում ենք՝ «Լինում է, չի լինում՝ մի աքլոր է լինում» («Անհաղթ աքլորը»), «Լինում է, չի լինում՝ մի պառավ» («Պոչատ աղվեսը»), «Ժամանակով մի աղքատ մարդ կար» («Անխելք մարդը»), «Երկու ախպեր են լինում» («Խելոքն ու հիմարը»), «Ժամանակով մի մարդ ու կնիկ են լինում» («Բարեկենդանը»), «Բարին էստեղ, չարն էն ազահ թագավորի մոտ» («Ոսկու կարասը») և այլն:

Նույն կերպ ռուս հեղինակներն են այս ձևերն օգտագործել հեքիաթներ գրելիս, մասնավորապես, Ա.Պուշկինն իր չափածո հեքիաթների սկզբի համար օգտագործել է՝ "Негде, в тридевятом царстве, / В тридевятом государстве, / Жил-был славный царь Дадон" ("Сказка о золотом петушке"), "Жил-был поп, / Толоконный лоб, / Пошел поп по базару / Посмотреть кой-какого товару" ("Сказка о попе и о работнике его Балде"), արտահայտությունները, իսկ ավարտի համար՝ "Я там был: мед, пиво пил - / И усы лишь обмочил" ("Сказка о царе Салтане, о сыне его славном и могучем богатыре князе Гвидоне Салтановиче и о прекрасной царевне Лебеди"), "Сказка ложь, да в ней намек, / Добрым молодцам урок" ("Сказка о золотом петушке") և այլ ձևեր: Ասվածը վերաբերում է նաև մյուս հեղինակներին:

Ինչպես արդեն նշել ենք, խնդիր է՝ արդյոք թարգմանել ցուցիչները, թե ոչ: Տարբեր գրողներ տարբեր կերպ են իրենց համար լուծել այդ խնդիրը: Թումանյանն, օրինակ, երբեմն օգտագործել է հայկական ցուցիչները՝ օտար հեքիաթների համար. «Ժուկով-ժամանակով Հնդկաստանի Բենարես քաղաքում տիրելիս է լինում Ուքանա թագավորը» («Ոսկի քաղաքը»), «Ժամանակով մի թագավոր է լինում, էնքան ուժեղ, էնքան բարձր ձեն է ունենում, որ հազար վերստի վրա լսվում է» («Որոտ թագավորը»), «Ու էն օրվանից ապրում են ուրախ ու ապահով» («Կախարդի քսակը»):

Թարգմանության ժամանակ կա մի քանի ելք՝ թարգմանել օտարալեզու հեքիաթի ցուցիչը, օգտագործել սեփական լեզվի ցուցիչը օտար հեքիաթի համար կամ օգտագործել որևէ այլ սկիզբ ու ավարտ: Այս երեք տարբերակներն էլ ունեն իրենց և՛ դրական, և՛ բացասական կողմերը: Մասնավորապես, ռուսական որոշ ցուցիչներ շատ յուրահատուկ են, ինչպես՝ “Жили себе дед да баба”, “Жили-были кум с кумой”, “Свадьба была богатая; на той свадьбе и я был, мед-вино пил, по усам текло, во рту не было”, “Вот вам сказка, а мне кринка масла”. եթե այս ցուցիչներն օգտագործվեն, օրինակ, ճապոնական հեքիաթների թարգանության ժամանակ, մեղմ ասած, այնքան էլ ճիշտ չի ստացվի, հեքիաթի գործողություններն ակամա կտեղափոխվեն Ռուսաստան: Սակայն ավելի «չեզոք ցուցիչները» հնարավոր է շատ հանգիստ օգտագործել: Միաժամանակ երբեմն շատ հետաքրքիր է ստացում, երբ թարգմանվում է որևէ յուրահատուկ մշակույթ ներկայացնող ցուցիչ:

Կարելի է դիտարկել, թե ինչպես են այդ խնդիրն իրենց համար լուծել հայ դասականները՝ Հովհաննես Թումանյանը և Աթաբեկ Խնկոյանը: Ռուսական “Аленький цветочек” հեքիաթը, որը մշակել է Ս. Տ. Ակսակովը, ունի շատ տիպիկ ռուսական սկզբի և ավարտի ցուցիչներ՝ “В некиим царстве, в некиим государстве жил-был богатый купец” և “... и нимало не медля принялись веселым пирком да за свадебку, и стали жить да поживать, добра наживать. Я сама там была, пиво-мед пила, по усам текло, да в рот не попало”: Թումանյանը սկզբի համար օգտագործել է համարժեք հայկական հեքիաթի ցուցիչ՝ «Լինում է չի լինում, մի հարուստ վաճառական» և նախընտրել է ավարտել ավելի «չեզոք» ձևակերպմամբ՝ «…ամենքը ամեն կողմից առաջ են գալիս, շնորհավորում են նորահարսի ու նորափեսի բախտավորությունն, ու սկսում է ուրախ հարսանիքի հանդեսը»: Ու թեև սա ցուցիչ չէ, սակայն այս ձևակերպումը իմաստով մոտ է «Յոթ օր, յոթ գիշեր հարսանիք արեցին» ցուցիչին, քանի որ եզրափակիչ հավաք է, որտեղ ներկա են բոլոր դրական հերոսները և այդ ուրախությամբ ավարտվում են գործողությունները:

Ա. Ս. Պուշկինի “Сказка о попе и о работнике его Балде” հեքիաթն ունի ռուսական հեքիաթներին հատուկ սկիզբ՝ “Жил-был поп, / Толоконный лоб, / Пошел поп по базару / Посмотреть кой-какого товару”, իսկ ավարտը առանց ցուցիչի է՝ “А Балда приговаривал с укоризной:/ Не гонялся бы ты, поп, за дешевизной”: Ա. Խնկոյանն ընդհանրապես ցուցիչներ չի օգտագործել՝ «Մի ժլատ տերտեր,/ Հարուստ, տնատեր,/ Վաղ զնաց շուկա,/ Որ գործը հոգա,/ Ետ դառնա տուն գա» և «-Ժլատ ծերուկ, էս քեզ մի դաս,/ Էժանություն էլ ման չգաս,-/ Ասավ Բալդին ուրախ, ուրախ,/ Ելավ գնաց անվարձ, անհախ»: Ինչպես նկատեցինք, թարգմանության ժամանակ հայ դասականները տարբեր կերպ են լուծել այդ խնդիրը, ճկուն մոտեցում են ցուցաբերել խնդրին, և երկու

դեպքում էլ, բարձրակարգ թարգմանությունների շնորհիվ, հայ ընթերցողն ունի հիանալի հեքիաթներ, որոնք ընկալվում են ոչ թե որպես սոսկ թարգմանություն, այլ գրական ստեղծագործություն:

Ինչպես արդեն նշեցինք, յուրաքանչյուր թարգմանիչ իր ռազմավարությանը, գրականության իր ընկալմանը, ճաշակին, ժամանակաշրջանին համապատասխան ինքը պետք է ընտրի՝ ինչպես թարգմանել հեքիաթը: Այստեղ համընդհանուր դեղատոմսեր չկան և չեն էլ կարող լինել: Պարզապես պետք է պահպանել չափի զգացումը: Այս առումով տեղին է հիշել թարգմանիչ, հեքիաթագիր, թարգմանության տեսաբան Կ. Չուկովսկուն, ով իր «Բարձր արվեստ» աշխատությունում տալիս է մի շարք ընդհանուր խորհուրդներ, ավելի ստույգ՝ «չի կարելիների» մի շարք: Եվ այսպես, յուրաքանչյուր դարաշրջան ունի իր ոճը, և անթույլատրելի է, որպեսզի վեպում, որը գրվել է 19-րդ դարի 30-ականներին, հանդիպեն դեկադենտիստական 90-ականներին հատուկ բառեր: Անգլիացի Ջեկին կամ շոտլանդացի Ջոկին չի կարելի անվանել ռուսական-հրեական կենցաղային երանգ ունեցող Յաշա անունով: Բացառվում է, որ իտալացի կարաբինակիրները կամ բրիտանացի լորդերն օգտագործեն ռուսական կենցաղին բնորոշ բառեր կամ հիշատակեն Ա. Գրիբոյեդովի ստեղծագործությունների թևավոր խոսքերը[10]: Նրա խորհուրդները անհրաժեշտ է հիշել նաև հեքիաթներ թարգմանելիս: Իբրև ժողովրդի ամենավառ արտահայտություններից մեկին՝ հեքիաթին, պետք է մոտենալ այդ «չի կարելիների» տեսակետից:

Վերադառնալով հեքիաթին՝ իր շրջանակ կազմող ցուցիչներով հանդերձ, նկատենք, որ շրջանակի գաղափարը բավականին կենսունակ ու գրավիչ է: Ինչպես հազարամյակներ առաջ մարդիկ այն օգտագործում էին հեքիաթներ և արվեստի այլ ստեղծագործություններ ստեղծելիս, նույն կերպ այժմ, երբ ստեղծվում են արվեստի նոր ճյուղեր, շրջանակը շարունակում է մնալ բովանդակությունը զարդարող, այն ներկայանալի դարձնող և արվեստի գործ կոչվելու իրավունք տվող ձևերից, հնարքներից մեկը: Սրա լավագույն ապացույցը 20-րդ դարի ծնունդ կինեմատոգրաֆն է, որը նույնպես վերցրել է պայմանականության ստեղծման այս ձևը՝ շրջանակը: Բավական է հիշել միայն շատ տարածված «հեփի էնդ»-երը, որոնք ոչ այլ ինչ են, քան հեքիաթի ավարտի ցուցիչներ՝ գործող հերոսների ամբողջությամբ, նրանց ճակատագրի հստակեցմամբ, գործողությունների դադարով:

Անշուշտ, արվեստի բոլոր ոլորտներում կարևոր է բովանդակությունը, սակայն այն պետք է արտահայտվի, ունենա ձև, իսկ տվյալ դեպքում մեր հոդվածում ներկայացված շրջանակը ձև է, միջոց է՝ արտահայտելու համար բովանդակությունը:

Արվեստի վերլուծությունը պետք է դրանք քննի միասին. ձևի վերլուծությունը պետք է վերհանի նաև բովանդակությունը, բովանդակության վերլուծությունը՝ ձևը: Եվ, կարծում ենք, որ այս աշխատանքում ներկայացված հեքիաթի ժանրի մեկ դետալի՝ ցուցչի քննությունը բանալի կդառնա նաև ապագայում բովանդակության քննության համար՝ այսպիսով ամբողջացնելով հեքիաթի ժանրի ընդհանուր վերլուծությունը:

[10] **К. Чуковский**, Высокое искусство', Москва, 1966, стр.256.